

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԳՐՈՒՄ

2003թ.-ին ՀՀ ՎՊԽ կողմից ընդունվել է «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ը:

2003թ.-ին ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցի ստեղծման աշխատանքները: Ըստ այդմ, ցանցին միացված տեխնիկական պահանջներին համապատասխանող և գործող համակարգիչների քանակը կազմել է 130:

ԱՄՀ ՏՏՀՍ-ով սահմանված՝ տեղեկատվության ինտերնետային տարածման ապահովման նպատակով ստեղծվել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկատվական էջը «ՄայլեսԶյուԷլ» տվյալների բազաների կառավարման համակարգով և կառուցվել է այդ բազայի մուտքագրման ինտերնետային տարբերակը «ՓիԷյՉՓի» տեխնոլոգիայի միջոցով:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներում շահագործվել է «ԷնԷԼԵՍԳրուպ» դոմենային միջավայրը՝ «Վինդոուս-2000» սերվերի կառավարմամբ, որն ապահովում է ցանցի կենտրոնացված կառավարում և հնարավորություն է ընձեռում ապահովել ցանցի աշխատանքի բարձր հուսալիությունը:

ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի և Շիրակի, Տավուշի, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզային գործակալություններում ստեղծվել են տեղային համակարգչային ցանցեր:

ՀՀ ԱՎԾ «Վինդոուս-2000» սերվերի վրա տեղակայվել և փորձարկվել է մոդեմային հանգույցը: Մոդեմային ժամանակակից կապ է ներդրվել ՀՀ ԱՎԾ Տավուշի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզային գործակալություններում, ինչպես նաև Իջևանի, Դիլիջանի, Վայքի, Եղեգնաձորի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Էջմիածնի տարածքային ստորաբաժանումների հետ:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների համար տեղակայվել է @armstat.am փոստային սերվերը:

Շարունակվել են վիճակագրական տվյալների մշակման ծրագրային ապահովման տվյալների բազաների ստեղծման աշխատանքները: Տարբեր ոլորտների պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մշակման համար ստեղծվել են տվյալների 9 նոր բազաներ: Կատարվել են փոփոխություններ գործող 52 համակարգչային ծրագրերի մեջ:

Վիճակագրական տվյալների պաշարների պահպանման և մշակման համար տեղակայվել է «Վինդոուս-2000» սերվեր՝ «ԷսԶյուԷլ-2000» ծրագրային ապահովմամբ: Այդ սերվերի վրա ստեղծվել են դասակարգիչների բազա և վիճակագրական տվյալների (ժողովրդագրություն, ֆինանսներ, տնային տնտեսություններ, արդյունաբերություն, սոցիալական ոլորտ, տրանսպորտ) բազաներ:

Մշակվել է ծրագրային ապահովում, որը վիճակագրական տվյալներն օպերատիվ բազաներից վերափոխում է «ԷսԶյուԷլ» սերվերի համապատասխան բազաների:

Կատարվել է ժամանակակից «ԷյԷսՓի» տեխնոլոգիաներին համապատասխան ինտերնետային հանգույցի վերակազմավորում՝ տեղեկատվության տեղակայման

օպերատիվության և ինտերակտիվության նպատակով, ավելացվել է նոր «Վիճակագրական տվյալներ» բաժինը:

«ԷյԷսՓի» տեխնոլոգիաներով մշակվել է համապատասխան աշխատանքային միջավայր վիճակագրական տվյալների ներմուծման և հարցումների միջոցով աղյուսակային տվյալների ստացման համար:

Շարունակվել է ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության արխիվացման համակարգի իրականացում:

Ներդրվել է սերվերից տեղակայվող և կառավարվող հակավիրուսային պաշտպանության ժամանակակից ծրագիր:

Վերատեղակայվել և հզորացվել են ՄայԷսԶյուԷլ, ինտրանետ և արխիվային սերվերները ժամանակակից անվտանգության կանոններին համապատասխան:

Կատարվել է Ինտրանետի սպասարկում՝ հակավիրուսային արդիականացնող ծրագրերի և առավել գործաձվող ծրագրերի պարբերաբար տեղակայում սերվերի վրա: